ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Թրաստիթ & Ինվեստմենտ Բանկինգ

ARMSWISSBANK
Private & Investment Banking

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2014 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք.Ժնև

2014 թվականի ապրիլի 15-ին, ժամը 14:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր Վարդան Սիրմաքեսը (11670 ձայնի իրավունքով) և «Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Փիթր Օստոեկի (2918 ձայնի իրավունքով):

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 14588) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովը նախագահում էր Վ. Սրմաքեսը, իսկ ժողովի քարտուղարն էր Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2013 թվականի շահույթի բաշխման մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

<u>Երկրորդ հարցով</u> (զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)՝
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2013 թվականի ֆինանսական տարվա 1,742,174,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր քառասուներկու միլիոն մեկ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ մնացած 1,242,174,000 (մեկ միլիարդ երկու հարյուր քառասուներկու միլիոն մեկ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. ապրիլի 15-ից:

Նիստին այլ հարցեր չքննարկվեցին:

Սույն արձանագրությունը կազմված է 15.04.2014թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 3 (երեք) էջից:

Բաժնետերեր՝ /ստորագրություն/ Վ. Սիրմաքես

/ստորագրություն/ Փ. Օստոեկ

Քարտուղար՝/ստորագրություն/ Ա. Սելլեֆյան